Հավելված 2
2022թ. Հունվարի 31-ին
կնքված NԴՏՊ-1141-11015/22ԿԱԵ պայմանագրի

# Դրամաշնորհային հաշվետվություն N1

## 1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Ծրագրի անվանում | «Ընտանիքում բռնության ենթարկված անձանց ապաստարանի ծառայություններ» |
| Դրամաշնորհի N | Լոտ 1 |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | Կանանց աջակցման կենտրոն |
| Ծրագրի իրականացման ժամանակահատված | 01.01.2022թ. – 31.12.2022թ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.03.2022-31.03.2022 |
| Ներկայացման օր | 07.04.2022 |
| Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն) | Հասմիկ Գևորգյան |

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

1. Ընտանիքում բռնության ենթարկվածներին և նրանց խնամքի տակ գտնվող անձանց ապահովել անհատույց և ապահով բնակելի տարածքով, իսկ հաշմանդամություն ունեցող անձանց ապահովել իրենց կարիքներին հարմարցված և մատչելի միջավայրով:
2. Կազմակերպության կողմից նախապես իրականացված կարիքների գնահատման հիման վրա՝ ընտանիքում բռնության ենթարկվածներին և նրանց խնամքի տակ գտնվող անձանց ապահովել սննդով, հագուստով, և այլ անհրաժեշտ պարագաներով, ինչպես նաև երեխաներին դասապատրաստման համար անհրաժեշտ պիտույքներով:
3. Անվճար հոգեբանական և իրավաբանական օգնություն տրամադրել ապաստարանում գտնվող ընտանիքում բռնության ենթարկվածներին և նրանց խնամքի տակ գտնվող անձանց:
4. Աջակցում և ուղղորդում են կացարանում գտնվող շահառուներին մասնագիտական հմտությունների ձեռքբերման, աշխատանքի կարիք ունեցող անձանց աշխատանքի տեղավորման, ինչպես նաև պետական ծրագրերից կամ այլ կառույցների կողմից իրականացվող ծրագրերից սոցիալական աջակցություն ստանալու հարցերում:
5. Ընտանիքում բռնության ենթարկվածների և նրանց խնամքի տակ գտվող անձանց համաձայնությամբ՝ կազմակերպում են նրանց կողմից առողջապահական հաստատություններ դիմելու գործընթացը:
6. Ընտանիքում բռնության ենթարկվածներին միանվագ դրամական փոխհատուցում տրամադրելու վերաբերյալ միջնորդության կազմում և ներկայացում Լիազոր մարմնին, անհրաժեշտ փաստաթղթերի հավաքագրման օժանդակում:

**2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացը՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են**

**նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի շրջանակում ապաստարանի ծառայությունից օգտվել է 5 կին և 9 երեխա։ Հոգեբանական աջակցություն է ստացել 5 կին և 6 երեխա, իրավաբանական խորհրդատվություն 2 կին, բժշկական աջակցություն ստացել են 1 կին և 1 երեխա։ ՊՇՌ թեստավորում են անցել 3 կին և 5 երեխա։ Լուծվել է 2 երեխայի կրթության հարցը և շարունակվել է 3 երեխայի հեռավար կրթությունը։ Սնունդ և հագուստ է տրամադրվել ապաստարանում գտնվող բոլոր կանանց և երեխաններին։

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիապրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում որևէ նյութ չի հրապարակվել։

**2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում խնդիրներ են առաջացել հեռավար կրթության ապահովման հետ կապված:

**2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Շարունակվելու է իրականացվել ծրագրի շրջանակում նախատեսված գործողությունները։

**2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:**

Այս ժամանակահատվածում ծրագրում չնախատեսված գործողություններից լուծվել է բնակարանի վարձակալության, կենցաղային իրերի ձեքբերման և տեղափոխման ճանապարհածախսի հարցը։

Մարի Մաթոսյան

Կանանց Աջակցման Կենտրոն